ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 սեպտեմբերի 2024 թվականի N 1021-Ա

ԿՈՒՄՆԻ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

04.07.2024-ին «ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանը», ի դեմս համայնքի ղեկավար է. Արշակյանի (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից և «ԿՈՒՄՆԻ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Հ. Վիրաբյանի (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքել են թափառող կենդանիների ստերիլիզացման/ամլացման ծառայությունների մատուցման գնման (N ՀՀ ԼՄՏՀ-ԳՀԾՁԲ-24/64) պայմանագիր, որի համաձայն՝ կատարողը ստանձնել է թափառող կենդանիների ստերիլիզացման/ամլացման ծառայությունների մատուցման պարտավորությունը:

Կատարողի կողմից չեն պահպանվել պայմանագրի անբաժանելի մաս կազմող N 1 հավելվածով սահմանված ծառայության մատուցման ժամանակացույցով նախատեսված ժամկետները:

Տաշիրի համայնքապետարանը, ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքով և N ՀՀ ԼՄՏՀ-ԳՀԾՁԲ-24/64 ծածկագրով պայմանագիր 2.1.3-րդ կետի պահանջներով, 05.09.2024-ին միակողմանի լուծել է կնքված Պայմանագիրը: Պայմանագրի լուծման վերաբերյալ հայտարարությունը 05.09.2024-ին հրապարակվել է տեղեկագրում, և 06.09.2024-ի դրությամբ Պայմանագիրը համարվում է լուծված:

«ԿՈՒՄՆԻ» ՍՊԸ-ն առաջարկվել է տասնօրյա ժամկետում տուժանքի ձևով, որպես պայմանագրային պարտավորությունների պատշաճ կատարման ապահովում ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ 300000 (երեք

հարյուր հազար) ՀՀ դրամ և 200000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամ փոխանցել Տաշիրի համայնքապետարանի 900275081108 հաշվեհամարին:

«ԿՈՒՄՆԻ» ՍՊԸ-ի կողմից որակավորման և պայմանագրի ապահովումները չեն վճարվել:

Ղեկավարվելով «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.«ԿՈՒՄՆԻ» ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

2. ՀՀ Ֆինանսների նախարարություն ներկայացնել «ԿՈՒՄՆԻ» ՍՊԸ տվյալները՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար՝ համաձայն հավելվածի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2024թ. սեպտեմբերի 25

ք. Տաշիր